



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

Մամլո հաղորդագրություն

մարտի 11, 2022

## ՔՈԱՖ-ը միջազգային ճարտարապետական մրցույթ է հայտարարում Արմավիրի մարզում կառուցվելիք ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանի համար

ԵՐԵՎԱՆ — Արմավիրի մարզում կառուցվելիք ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանի նախագծման համար ՔՈԱՖ-ը միջազգային ճարտարապետական մրցույթ է հայտարարել: Աշխարհի տարբեր երկրների ճարտարապետներ կարող են ներկայացնել 90 հա մակերեսով ավանի մաս կազմող կրթական, մշակութային, զբոսաշրջային կառույցների՝ իրենց ինքնատիպ նախագծերը մինչև մայիսի 2-ը՝ այցելելով [coaf.org/hy/smartarmavir](https://coaf.org/hy/smartarmavir) կայքէջ: Հաղթող նախագծերը կորոշվեն պրոֆեսիոնալ ժյուրիի կողմից, որի անդամներ են աշխարհով մեկ հայտնի ճարտարապետներ, կրթական հաստատությունների ներկայացուցիչներ:

Կառուցվելիք ՍՄԱՐԹ ավանը կլինի երկրորդը Հայաստանում՝ 2018թ. բացված Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանից հետո: Մինչ օրս Լոռու ՍՄԱՐԹ կենտրոն են հաճախել շուրջ 3,000 երեխաներ ու երիտասարդներ՝ ուսանելու այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են արվեստը, երաժշտությունը, լեզուները, ճարտարագիտությունը, ձեռներեցությունն ու աթլետիկան: Լոռու ՍՄԱՐԹ ավանը, բացի գյուղաբնակ երիտասարդներին կրթական լայն հնարավորություններ ընձեռելը, զբոսաշրջության ու տնտեսական զարգացման կայուն հիմքեր է դրել մարզում՝ շնորհիվ Կոնցեպտ հյուրանոցի, զբոսաշրջիկների համար տեղեկատվական կենտրոնի հանդիսացող այցելուների կենտրոնի, ծառերի տնկարանի: Այս ենթակառուցվածքներին շուտով կմիանա ևս մեկը՝ ՔՈԱՖ ՄԱՐԹ համագումարների կենտրոնը:

Արմավիրում նոր ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանի կառուցմամբ ՔՈԱՖ-ը վերահաստատում է իր հավատարմությունը Հայաստանի գյուղական համայնքները վերակառուցելու ու զարգացնելու առաքելությանը: ՍՄԱՐԹ ավանի ու հայտարարված մրցույթի առանցքում ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնն է, որն իրենից ներկայացնում է տեխնոլոգիապես հագեցած, ոչ ֆորմալ կրթական հաստատություն, որը բազմաթիվ հնարավորություններից զուրկ գյուղաբնակ երիտասարդներին կառաջարկի բազմապրոֆիլ արտադարոցական ծրագրեր: ՍՄԱՐԹ կենտրոնն ու վերջինիս հարակից կարողությունների զարգացման ու սոցիալական ձեռներեցության հաստատությունները, որ խթանում են տարածաշրջանի տնտեսական զարգացումը, միասին կապահովի գյուղական համայնքների կայուն զարգացումը:



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

Երկրորդ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանի միջազգային ճարտարապետական մրցույթի հայտարարմամբ Հայաստանի գյուղական համայնքների զարգացման նոր փուլ է սկսվում, քանի որ ՔՈԱՖ-ը ձգտում է զարգացնել Հայաստանի գյուղերը՝ երկրով մեկ ՍՄԱՐԹ ավաններ կառուցելով: Իսկ Արմավիրն այն մարզն է, որտեղից ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր առաջին ծրագրերը: Հիմնադրամը հրավիրում է աշխարհի տարբեր երկրների ճարտարապետներին՝ ներկայացնելու իրենց ստեղծարար լուծումները՝ ներդրում ունենալով Հայաստանի գյուղերում ապրող հազարավոր ընտանիքների կյանքի որակի փոփոխման գործում:

### **«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին**

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները: 2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: